Արձանագրություն N 3

«ԳԳՀ-ԳՀԱՊՁԲ-26/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» հունիսի 2026թ.
ժ.16.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Ղահրիյան – հիմնադրամի վերլուծաբան-հետազոտող
Հանձնաժողովի անդամ՝ Գ. Ափոյան – հիմնադրամի տնօրենի օգնական
Հանձնաժողովի անդամ՝ Ռ. Մաթոսյան – հիմնադրամի իրավաբան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Դալլաքյան - գնումներ համակարգող

1. «ԳԳՀ-ԳՀԱՊՁԲ-26/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.

ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի ունեցավ 2026թ. հունիսի 19-ին ժ. 16.00-ին «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի շենքում, ք. Երևան, Մ.Բաղրամյան 24/6, 7-րդ հարկ, հասցեում :

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և դրա մասին ծանուցվել «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ -ին, «ՄՄՄ Տեխ» ՍՊԸ-ին, «ՍԵԳ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 19.06.2026թ. ժ.16.00-ն շտկելու հավելված 1.1-ում առկա անհամապատասխանությունները: Նշված մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը գնահատեց մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ դրանք համապատասխանում են հրավերով նախատեսվածին: «ԳԳՀ-ԳՀԱՊՁԲ-26/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ՀՕ-21-Ն

Որոշում – 26/13-3

1. Բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (ՀՕ-21-Ն) 34-րդ հոդվածի 6-րդ մասով.
   - 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «ՄՄՄ Տեխ» ՍՊԸ -ին:
   - 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ին:
2. Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. Սահմանվում է անգործության ժամկետ 10 օրացուցային օր՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի (ՀՕ-21-Ն) 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամները.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ.Ղահրիյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Գ.Ափոյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ռ. Մաթոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հ. Դալլաքյան